

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԽԵՂԱԹԻՒՐԵԼՈՒ ՓՈՐՉ ՄԸ

Գրեց՝ Յ. ԱՄԱՏՈՒՆԻ

ՆԱԹԻՐՔԱԿԱՆ վերջին պատերազմին առթիւ, իր պատմական ճառին մէջ, Մուսթաֆա Քեմալ, իրրեւ տեղեկատուութիւն, լուսթեան մէջ պահելով պատմական ճիշդ իրողութիւններն ու յարձակման իրական շարժառիթները, փորձած են ցոյց տալ, թէ Հայաստանի բանակը պատճառ եղած է պատերազմական գործողութիւնները սկսելուն:

Պատմութիւնը խարելու այս փորձը փաստերով սպայացուցանելու համար, Մուսթաֆա Քեմալ իր տեղեկագրին մէջ կ'ըսէ. —

« 1920 թուականին արեւելեան շրջանակի մէջ առժամեայ զօրաշարժ հրատարակեցինք եւ 15-րդ զօրաբանակի հրամանատար Քեազիմ Գարապէշիւր փաշան՝ արեւելեան ճակատի հրամանատար կարգեցինք», որովհետեւ ... «1920 Յունիսին հայերը Օլթիի մէջ կազմուած քուրժ վարչութեան դէմ յարձակելով գրաւեցին այդ շրջանը»... եւ «վերջապէս, զօրաշարժէն երեք ու կէս չորս ամիս վերջ Քէօթէկ-Պարտուս շրջանակին մէջ հաւաքուած մեր ուժերուն դէմ հայերու յարձակումով պատերազմական շարժումը սկսաւ»:

Անկողմնակալ ընթերցողը անմիջապէս պիտի մտածէ, թէ իսկապէս պատերազմի պատճառ եղած է հայկական բանակը թրքական հողերու դէմ կատարած իր անտեղի արշաւանքներով: Սակայն, իրողութիւնը բոլորովին ուրիշ բան է, քան այն, որ այնքան սրբող կերպով կը փորձէ ներկայացնել Մուստաֆա Քեմալ:

Խնդրոյ առարկայ այն շրջանները, որոնց դէմ իրր թէ հայկական բանակը յարձակումներ ըրած է, զոր Մուսթաֆա Քեմալ կը համարէ թրքական հող եւ թրքական վարչութիւն, 1878-ի ուս-թրքական պատերազմէն ի վեր թրքական հողեր չեն եղած եւ ոչ ալ այդ շրջանի վարչութիւնները թրքական իշխանութիւն: Սակայն, Մուսթաֆա Քեմալ դանոնք

կը նկատէ թրքական եւ անոր դէմ եղած սեւէ «յարձակում» կը նկատէ Թուրքիոյ դէմ ուղղւած:

Ինչո՞ւ: Այս հարցի լուսարանութիւնը պիտի բանայ խնդրոյն թարուն ծալքերը:

Ճիշդ է, որ ուստական բանակի քայքայուելէն յետոյ Բրեստ-Լիթովսկի դաշնագրի արամազրութեամբ այդ հողերը կը թողուէին Թուրքիոյ: Ճիշդ է նաեւ, որ հայ-թրքական 1918-ի պատերազմի հետեւանքը եղող Բաթումի դաշնագրով, Հայաստանի կառավարութիւնն ալ ստիպուած եղաւ այդ հողերը թողելու Թուրքիոյ: Սակայն, համաշխարհային պատերազմի զինազաղարէն յետոյ այդ դաշնագրիները յայտարարուեցան ջնջուած: Թրքական կառավարութիւնը պաշտօնապէս հաւանելով այդ գործողութեան, զինուորապէս ու քաղաքականապէս պարպեց յիշեալ հողամասերը, ինչպէս որ Գերմանիա պարպեց բալտեան երկիրները, Լեհաստանն եւ Ուկրայնան եւ երբեք օր մը մտքէն չանցուց ինքզինքը այդ հողերուն տէրը համարել:

Ի հարկէ, Մուսթաֆա Քեմալ եւ իր ընկերները քաղաքական երախտներ չէին եւ շատ լաւ գիտէին, թէ այդ հողերուն վրայ ոչ իրաւունք ունին եւ ոչ ալ այնտեղի բնակչութիւնը կրնան իրենց հպատակները նկատել: Սակայն, հակառակ այս յստակ երեւոյթին, ոչ միայն զանոնք նկատած են թրքական, այլ նաեւ թուրք ազգային ուխտի յօդուածի մը արամազրութեան համաձայն 1878-ի սահմաններէն դէպի հիւսիս գտնուող որոշ հողամասեր նկատած են Թուրքիոյ անբաժան մասերը:

Ասիկա պատահականօրէն եւ քմահաճ քայլ մը չէր, որուն ետեւը մուլթին մէջ որոշ երաշխիք եւ ապահովութիւն չունենար, այլ յենուած էր որոշ քաղաքական հաստատուն սուեալներու վրայ, որոնք լայն հասարակութեան անձանօթ կը մնային: